Մարտ, 2008

Գրքույկ

Տնային վնասատուների արդյունավետ հսկողություն

Տեղեկատվություն տարեց մեծահասակների և ընտանեկան խնամողների համար

Արդյո՞ք դուք գիտեիք, որ ԱՄՆ տնային տնտեսությունների տասից ութը օգտագործում է պեստիցիդներ թե՛ տների ներսում, թե՛ իրենց տներից դուրս:[1] Լայնորեն օգտագործվող պեստիցիդներից են ուտիճների հեղուկացիրները և հրապուրակերերը, հակամեծամրջյունային միջոցները, առնետի թույնը, լվի և տզի հեղուկացիրները և խոհանոցի ու լողասենյակի հեղուկացիրները:

Պեստիցիդների էկոլոգիական վտանգները

Պեստիցիդներին բարձր մակարդակներին ենթարկվածությունը, արտադրանքի ոչ պատշաճ օգտագործման հետևանքով սովորաբար կարող է հանգեցնել սուր ազդեցությունների, ինչպիսիք են գլխացավերը, գլխապտույտը, մկանային ջղաձգությունը, թուլությունը և սրտխառնոցը: Որոշ պեստիցիդներին երկարաժամկետ և/կամ չափազանց ենթարկվածությունը կապվել է քաղցկեղի, վերարտադրողական ազդեցությունների և կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդեցությունների հետ:

Ենթարկվածության կանխարգելում

Տատիկները և պապիկները կարող են կարևոր դեր խաղալ վտանգավոր պեստիցիդներից երեխաներին անվտանգ պահելու գործում՝ պահելով դրանք անհասանելի տեղերում:

Հիվանդանոցների ընդունարանների հարցումների համաձայն վեց տարեկանից ցածր երեխաների թունավորումը ավելի հավանական է իրենց պապիկներին և տատիկներին այցելելու ժամանակ, որտեղ թունավոր նյութերի հասանելի լինելը ավելի հավանական է, քան իրենց իսկ տներում եղած ժամանակ: Դրանից բացի, չնայած որ տարեցներին բաժին է ընկնում թունավորության արձանագրված դեպքերի միայն 2,8 տոկոսը, նրանց բաժին է ընկնում չափավորից մինչև ծանր բժշկական հետևանքների 5,9 տոկոսը և մահերի 28 տոկոսը:[2]

Օգտվե՛ք վնասատուների համալիր կառավարումից՝ խուսափե՛ք պեստիցիդների ոչ անհրաժեշտ օգտագործումից

ԱՄՆ ՇՄՊԳ-ն առաջարկում է վնասատուների օգտագործման ընդհանուր ռազմավարություն, որը հաճախ կոչվում է «վնասատուների

Եթե դուք կամ ընտանիքի անդամներն ունեն թունավորման սիմպտոմներ, ապա զանգահարե՛ք Թունավորումների հսկողության ազգային կենտրոնի ընդունարան՝ 1 800 222-1222

Պեստիցիդների պատասխանատու օգտագործումը կարևոր հարց է սերունդների համար:

Տարեց մեծահասակները կարող են ավելի դյուրազգայուն լինել պեստիցիդների ազդեցությունների ենթարկվածությանը կապված մարմնի քիմիական նյութերը մշակելու ունակության տարիքային փոփոխությունների հետ:

Վնասատուների համալիր կառավարման համակարգի օգտագործումը կարող է օգնել ձեզ խուսափելու պեստիցիդների ոչ անհրաժեշտ օգտագործումից:

Տողատակեր

[1] U.S. EPA, National Household Pesticide Usage Study, 1992, Office of Pesticide Programs

[2] National Poison Control Center Data, 1993-1998

Դուք ի՞նչ կարող եք անել, որպեսզի կրճատեք պեստիցիդներին ենթարկվածությունը

Հուշումներ տանը պեստիցիդների օգտագործման համար

- Կարդացե՛ք պիտակը: Պեստիցիդների անվտանգ և արդյունավետ օգտագործման ձեր լավագույն ուղեցույցը պեստիցիդի պիտակն է: Թույլ տեսողություն ունենալու դեպքում դիմե՛ք օգնության համար:
- Պահե՛ք պեստիցիդները միայն իսկական պահեստամաններում: Երբեք մի՛ օգտագործեք պեստիցիդների դատարկ պահեստամանը այլ նպատակով:
- Օգտվե՛ք ձեր տարածքում գործող թափոնների հեռացման համայնքային ծրագրից: Ճշտե՛ք ձեր պինդ թափոնների կառավարման մարմնի, բնապահպանական գործակալության կամ առողջապահական վարչության հետ՝ պարզելու, թե արդյոք ձեր համայնքում գործում է թափոնների հեռացման ծրագիր: Եթե ոչ, ապա ուշադրությամբ պահպանե՛ք պիտակի վրա նշված հեռացման ցուցումները:
- Երբեք մի՛ օգտագործեք դրսի պեստիցիդները տան ներսում:
- Մարդկանց և ընտանի կենդանիներին պահե՛ք պեստիցիդների հեղուկացիրների և աերոզոլային շարժիչների օգտագործման վայրերից հեռու: Ընթերցե՛ք պիտակը՝ իմանալու, թե երբ մարդիկ կամ ընտանի կենդանիները կարող են անվտանգ տարածք վերադառնալ:
- Խուսափե՛ք սնունդ պատրաստելու կամ պահեստավորելու վայրերում հեղուկացրելուց և խուսափե՛ք հատակները, պատերը կամ առաստաղները ամբողջությամբ մշակելուց:
- Սահմանափակե՛ք պեստիցիդների կիրառումը միջատներով հեղեղված տարածքներում, օգտագործելով միայն արտադրանքի պիտակում առաջարկվող քանակը:
- Խուսափե՛ք քամոտ օրով դրսում պեստիցիդների կիրառումից: Նախքան հեղուկացրումը փակե՛ք դռները և պատուհանները:
- Պեստիցիդի կիրառումից հետո, լվացե՛ք ձեր մարմնի կամ հագուստի բոլոր այն մասերը, որոնք կարող էին շփվել պեստիցիդի հետ:

կառավարման պլան (ՎԿՊ)»՝ վնասատուներին տներում կամ բազմաբնակարան շենքերում հսկելու նպատակով: ՎԿՊ-ն վնասատուների կառավարման համակարգ է, որն իր մեջ համակցում է ոչ քիմիական հսկողության ռազմավարությունները նվազ թունավոր պեստիցիդների օգտագործմամբ, որը նվազեցնում է մարդու առողջության և շրջակա միջավայրի ռիսկը:

Օրինակ, վնասատուների հսկողության նպատակով հեղուղակիցիրերի փոխարեն դուք կարող եք օգտագործել թակարդներ, հրապուրակերեր և գելեր: ՎՀԿ-ն նվազեցնում է առողջապահական ռիսկերը դյուրազգայուն բնակչության համար, ինչպիսինն է տարեցները:

Լրացուցիչ տեղեկացե՛ք ՇՄՊԳ-ի Ծերանալու նախաձեռնության մասին

ՇՄՊԳ-ի Ծերանալու նախաձեռնությունը, որը գործում է տարեց մեծահասակներին շրջակա միջավայրի հետ կապված առողջապահական ռիսկերից պաշտպանելու համար՝ հետազոտությունների համակարգման, կանխարգելիչ ռազմավարությունների և հանրային կրթության միջոցով: Այցելե՛ք www.epa.gov/aging:

Պեստիցիդների մասին լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք 703-305-5017 կամ այցելե՛ք մեր կայք էջը www.epa.gov/pesticides

AGING Initiative

Armenian translation of: *Effective Control of Household Pests*
Publication Number: EPA 100-F-08-023